3555

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«28» 03 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 041-24

Ձեռնարկողը՝ ***«ՏԻԿ ՄԵՏ» ՍՊԸ***
Արմավիրի մարզ, ք. Էջմիածին, Շահումյան փողոց, տուն 32

Գործունեությունը՝ ***Վաղարշապատ բնակավայրում նախատեսվող բանեցված կապարաթթվային մարտկոցների հավաքման, պահման և փոխադրման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն***
Արմավիրի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր՝ 3 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 041 - 24

«28» 03 **2024թ.**

Վաղարշապատ բնակավայրում նախատեսվող բանեցված կապարաթթվային մարտկոցների հավաքման, պահման և փոխադրման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	**«ՏԻԿ ՄԵՏ» ՍՊԸ**
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն /ՇՄԱԳ/,
Կատեգորիան՝	«Ա»
Տեղադրման վայրը՝	Արմավիրի մարզ, Վաղարշապատ համայնք

Ներածական մաս. «ՏԻԿ ՄԵՏ» ՍՊԸ-ի /այսուհետ՝ Ընկերություն/ կողմից նախատեսվող բանեցված կապարաթթվային մարտկոցների հավաքման, պահման, փոխադրման, օգտահանման գործունեությունը՝ համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /այսուհետ՝ Օրենք/ 14-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի ա) ենթակետի, դասակարգվում է Ա կատեգորիայի: Ընկերության գործունեության նպատակն է բնակչությունից և կազմակերպություններից գնել բանեցրած թթվային մարտկոցներ և դրանց համար սահմանված գործողություններին/գործածության ձևերին համապատասխան՝ նախաձեռնել և իրականացնել առևտրային գործունեություն՝ շահույթ ստանալու նպատակով:

Նկարագրական մաս. Գործունեության իրականացման տարածքը գտնվում է Արմավիրի մարզ, քաղաք Էջմիածին, Մաշտոցի փողոց 2-րդ փակողի 0 հասցեում՝ քաղաքի ծայրամասում: Տարածքը և նրանում գտնվող շենք շինությունները Ընկերության կողմից նախատեսված է օգտագործել վարձակալական հիմունքներով: Գործունեության տարածքն իրենից ներկայացնում է փակ շինություն՝ շրջապատված պահեստային և արտադրական տարածքներով: Ընկերությունը նախատեսում է բնակչությունից և կազմակերպություններից գնել ավտոմեքենաներում օգտագործվող կապարաթթվային մարտկոցներ, և ընդունել արտադրական տարածքի պահեստավորման համար նախատեսված փակ շինությունում, որը զբաղեցնում է 521.4 ք.մ, մակերես: Արտադրական տարածքի հեռավորությունը ամենամոտ բնակելի տարածքից կազմում է 280 մետր:

Ըստ նախնական հաշվարկների՝ մարտկոցների հավաքման ծավալները տարեկան կազմելու են մոտ 1000 տոննա, ինչի պարագայում պինդ թափոնները համապատասխանաբար կկազմեն մինչև 95%:

Մատակարարներն իրենց տրանսպորտային միջոցներով մարտկոցները հասցնելու են մինչև նախատեսվող գործունեության ընդունման կետ, որտեղ տեղադրված կշեռքների միջոցով որոշվելու է մարտկոցների քաշը: Ընդունելուց հետո, առանձնացվելու են մարտկոցների պինդ և հեղուկ թափոնները: Դատարկ վիճակում բերված մարտկոցները տեղափոխվում են բետոնապատ հատակով պահեստ և տեղադրվում պալլետների վրա, իսկ փակ (թթու պարունակող) մարտկոցները տեղափոխվում են նույն շինության առանձնացման-տեսակավորման տեղամաս, որտեղ համապատասխան ուսուցում անցած և հատուկ արտահագուստով բանվորը բացում է մարտկոցի խցանները և բջիջների մեջի լուծույթը դատարկում հատուկ թթվակայուն նյութից պատրաստված հարմարեցված փականներով հերմետիկ տարողության մեջ: Հեղուկ մասը, որը հիմնականում թթվային լուծույթն է, նախատեսված է կուտակել հատուկ տարաներում, այնուհետև՝ մղել նստեցման տարողություն: Զտված լուծույթը ենթարկվում է չեզոքացման CaO-ով, իսկ զտվածքը նախատեսված է հավաքել ընկերության տարածքում՝ մինչև թափոն վերամշակող լիցենզավորված ընկերությանը հանձնելը: Մարտկոցները նախատեսված են վաճառել տեղում կամ արտահանել:

Նախատեսվող գործունեության հիմնական ռիսկերը պայմանավորված են բանեցրած մարտկոցների բաղադրությամբ և կազմով, քանի որ վերջիններս կարող են պարունակել թթվային մնացորդներ /ծծմբական թթու./, մետաղական կապար, ծարիր և դրանց միացությունները: Քանի որ տարանջատման գործընթացն իրականացվելու է առանձին մեկուսացված տարածքում և հավաքվելու է հերմետիկ տարաներում, հնարավոր ռիսկերը բացառվում են:

Գործունեության իրականացման ընթացքում մթնոլորտային օդի վրա ազդեցություն կարող է առաջանալ միայն բանեցրած մարտկոցներից ծծմբական թթվի մնացորդների դատարկման և չեզոքացման արդյունքում, քանի որ գործընթացն ուղեկցվում է ծծմբական թթվի աերոզոլի առաջացմամբ /չափազանց փոքր քանակով/:
Նախատեսվող գործունեության արդյունքում արտադրական արտահոսքի առաջացում չի կանխատեսվում, քանի որ մնացորդային լուծույթները վնասազերծվելուց հետո նախատեսված է տրամադրել լիցենզավորված վերամշակող կազմակերպություններին:

Բանեցված թթվային մարտկոցների ընդունման նախապատրաստման ընթացքում մարտկոցներում առաջացող էլեկտրոլիտի թափոնները /10 մ^3 առավելագույն հաշվարկային քանակով/ նախատեսված են կուտակել երկու թթվակայուն նյութերից պատրաստված տարողությունների մեջ:

Նախատեսվող գործունեության բացասական ազդեցությունը շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա բացառելու և նվազագույնի հասցնելու նպատակով՝ ՇՄԱԳ-ում նախատեսվել են միջոցառումներ:

Փորձաքննական հիմնավորում. Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ հաշվետվության փորձաքննությունն իրականացվել է Օրենքի պահանջներով: Փորձաքննության հիմնական փուլ ներկայացված Վաղարշապատ բնակավայրում նախատեսվող բանեցված կապարաթթվային մարտկոցների հավաքման, պահման և փոխադրման ՇՄԱԳ հաշվետվության բովանդակությունն Օրենքի պահանջներին և շրջակա միջավայրի նախարարության կողմից տրամադրված տեխնիկական

առաջադրանքի պահանջներին համապատասխանեցնելու նպատակով՝ բազմաթիվ դիտողություններով և առաջարկություններով երկու անգամ գրություններով վերադարձվել է Ընկերությանը՝ լրամշակման: Դիտողությունները վերաբերվել են, մասնավորապես, տեխնոլոգիական գործընթացներին /բանեցված թթվային մարտկոցների հավաքման, պահման, փոխադրման պայմաններին, էլեկտրոլիտի լուծույթի չեզոքացմանը/վնասազերծմանը/ և պահեստների շահագործմանը ներկայացվող պահանջների ապահովմանը, գործունեության ընթացքում առաջացող թափոնների կառավարմանն ուղղված միջոցառումներին, գործունեության արդյունքում առաջացող արտանետումների քանակական և որակական կազմին, դրանց կանխարգելմանն ու նվազեցմանն ուղղված միջոցառումներին:

Փորձաքննական գործընթացի լիարժեքությունն ապահովելու և հանրային քննարկում կազմակերպելու անհրաժեշտությունից ելնելով, Օրենքի 19-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն, 2024 թվականի փետրվարի 12-ի № 5/26.5/1665 գրությամբ, Ընկերությանը տեղեկացվել է հաշվետվության փորձաքննական գործընթացի ժամկետը 30 աշխատանքային օրով երկարաձգելու մասին: Սակայն մինչև փորձաքննության հիմնական փուլի ավարտն Ընկերության կողմից ՇՄԱԳ-ի լրամշակված տարբերակը չի ներկայացվել լիազոր մարմին՝ Օրենքով սահմանված ժամկետում փորձքննության գործընթացն ավարտելու համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հաշվի առնելով վերը նշված փորձաքննական հիմնավորումը և առաջնորդվելով Օրենքի 19-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջներով՝ «ՏԻԿ ՄԵՏ» ՍՊԸ-ի Վաղարշապատ բնակավայրում նախատեսվող բանեցված կապարաթթվային մարտկոցների հավաքման, պահման և փոխադրման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է բացասական եզրակացություն:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ Հերիքնազ Մկրտչյան